

ՀՄՀ ՋնՇԾ վարկեր

Հազարամայակների Մարտահրավերներ Հիմնադրամ – Հայաստան Ջրից դեպի Շուկա Ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

Նպատակը

Այս վարկերը տրամադրվում են այն ձեռնարկատերերին, ընկերություններին և ֆերմերներին, որոնք ցանկանում են զբաղվել բարձրարժեք գյուղատնտեսության զարգացմամբ և վերամշակմամբ Հազարամայակների Մարտահրավերներ Հիմնադրամ – Հայաստան Ջրից դեպի Շուկա Ծրագրի շրջանակներում:

Պայմանները

- ♣ Վարկի գումարը՝ 300 000 – 10 500 000 դրամ,
- ♣ ժամկետը՝ 24-72 ամիս,
- ♣ Վարկի տոկոսադրույքը՝ 12% տարեկան, հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ, հիմք ընդունելով տարին օրացուցային (365օր), բաժանարարը՝ 365,
- ♣ Տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր ամիս,
- ♣ Կախված գործարար ծրագրից՝ վարկի տրամադրումը կարող է իրականացվել փուլերով,
- ♣ Մայր գումարի մարման ժամանակացույցը կազմվում է հիմնվելով ծրագրի դրամական հոսքերի վրա և կարող է կիրառվել մայր գումարի մարման հետաձգման մինչև 36 ամիս արտոնյալ ժամկետ,
- ♣ Վարկը ժամկետից շուտ վերադարձնելու դեպքում լրացուցիչ գումար չի գանձվում,
- ♣ Վարկերը տրամադրվում են գրավով կամ օրենքով սահմանված այլ ապահովման միջոցներով ապահովված լինելու դեպքում.

- Մինչև 3 000 000 դրամին համարժեք վարկը կարող է տրամադրվել նաև 3 և ավելի երաշխավորությունների առկայության դեպքում,
- 3 000 000-ից ավել վարկերի տրամադրման համար գույքի գրավադրումը պարտադիր է (ընդ որում՝ վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրվող գույքի գրավային արժեքի 75%-ը),

Ապահովման միջոցի գրավային արժեքը կարող է որոշվել վարկային մասնագետի կողմից: Այս դեպքում անկախ գնահատողի գնահատումը պարտադիր չէ:

♣ Վարկի սպասարկման միջնորդավճար՝ հաստատված վարկի 2%-ի չափով, ոչ ավել 75000 դրամից, որից 6 000 դրամ հայտի ուսումնասիրման վճարը հայտատուի կողմից վճարվում է մինչև հայտի ներկայացնելը և ենթակա չէ վերադարձման, եթե նույնիսկ հայտը մերժվում է:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ձեր կողմից որպես վարկի ապահովման միջոց ներկայացված գույքը (տուն, մեքենա կամ այլ) կարող է առգրավվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարի մարումները: Պարտականությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում կարող է բռնագանձում տարածվել նաև Ձեր այլ գույքի վրա:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ձեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետի ավարտին չվճարելու դեպքում Ձեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում: